ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«02» դեկտեմբերի 2024 թ. No 9/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4**

Մասնակից՝ **Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի**

ՀՎՀՀ 57447036

(ՀՀ, Շիրակի մարզ, գ.Գեղանիստ-5փ, 3-րդ նրբ., տուն-2)

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով արխիվացման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ին: Գնահատող հանձնաժողովը 20.11.2024թ.-ին կայացած նիստում Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված N 1-ը՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև մասնակիցը չի նշել իր կազմակերպաիրավական կարգավիճակը: Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել

անհամապատասխանությունը: ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովը նիստը մեկ աշխատանքային օրով կասեցրել է և համակարգի միջոցով ծանուցել Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ին սահմանված ժամկետում համակարգի միջոցով չի շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնման հրավերի 8.11-րդ կետի՝ Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, քանի որ Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ին սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ին՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբան-ված որոշման հիման վրա, որոշում եմ Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

12/2/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ